

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

#### **ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ**

2009 թվականի հունվար-մարտ ամիսների փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ Հայաստանի տնտեսությունը շարունակում է կրել համաշխարհային ճգնաժամի բացասական ազդեցությունը՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է տնտեսական անկում տնտեսության բոլոր ճյուղերում, տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության անկում, հանրապետությունում աճել է գործազրկության պաշտոնական մակարդակը:

Տնտեսության անբարենպաստ զարգացումների արդյունքում 2009 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների անկում, ընդ որում՝ անկում է գրանցվել գրեթե բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքման գծով: Այնուհանդերձ առաջին եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է խիստ ընդլայնող՝ նպատակ ունենալով պահանջարկի ընդլայնման միջոցով հակազդել տնտեսության ակտիվության անկմանը:

#### **ՀԱՄԱԽԱՈՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ <sup>1</sup>**

2009 թվականի առաջին եռամսյակին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ ըստ գնահատումների նվազել է 1.9%-ով: Վերջնական սպառման իրական տոկոսային փոփոխության՝ պետական բյուջեի հիմքում դրվածի համեմատ ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է 2008 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում բնակչության իրական եկամուտների աճի տեմպերի զգալի նվազմամբ և դրա շարունակական խորացմամբ: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2009 թվականի հունվար-մարտին կազմել են 13.4 և 86.6 տոկոս, ընդ որում մասնավոր

<sup>1</sup> ՀՀ ֆինանսների նախարարության 2009 թվականի առաջին եռամսյակի նախնական գնահատականներ:

սպառման աճ նախորդ տարվա համեմատ չի արձանագրվել, իսկ պետական սպառումը նվազել է 12.7%-ով:

Կապիտալ ներդրումների (8% նվազում), մասնավորապես մասնավոր ներդրումների իրական արտահայտությամբ 8.8% նվազումը հիմնականում պայմանավորված է շինարարության ճյուղի աճի տեմպերի զգալի նվազմամբ, որն իր հերթին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված կապիտալ և ընթացիկ տրանսֆերտների սպասվածից էականորեն ցածր աճի արդյունք է: Կապիտալ ներդրումներում պետական ներդրումները նվազել են 3.4%-ով:

2009 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում գնահատվում է ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների 11.3% նվազում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի անկման և հոկտեմբեր ամսից համաշխարհային շուկաներում արձանագրված հունքային ապրանքների գների կտրուկ անկմամբ: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է 20%-ով:

#### ***ՀԱՍՏԱՆԱՈՆ ԱՌԱՋԱՐԿ***


2009 թվականի հունվար-մարտ ամիսներին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 465.5 մլրդ դրամ, ընդ որում իրական ՀՆԱ-ն նվազել է 6.1%-ով, իսկ դեֆլյատորը կազմել է 1.9%: Իրական աճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 15.3 տոկոսային կետով, իսկ դեֆլյատորը՝ 3.6 տոկոսային կետով:

2009 թվականի առաջին երեք ամիսների ընթացքում ծառայությունների ոլորտը շարունակել է հանդիսանալ տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը<sup>2</sup>: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.0 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 2.1%: Տնտեսության մյուս բոլոր ճյուղերը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված նվազել են. շինարարությունը 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ նվազել է 20.5%-ով, որի հաշվին տնտեսական աճն ընկել է 1.9 տոկոսային կետով, արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) նվազել է 9.7%-ով և 6.1% տնտեսական անկմանը նպաստել 2.2 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունը

<sup>2</sup> Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին

նվազել է 5%-ով և անկմանը նպաստել 0.4 տոկոսային կետով: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:

Գծապատկեր 1. 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափերը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2004-2008 թվականների և 2009 թվականի առաջին եռամսյակի իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ

	2004	2005	2006	2007	2008	2009 I եռ.
Համախառն ներքին արդյունք	110.5	113.9	113.2	113.8	106.8	93.9
Գյուղատնտեսություն	114.2	111.2	100.5	110.2	101.3	95.0
Արդյունաբերություն	102.2	105.6	97.5	103.1	102.4	90.3
Շինարարություն	115.3	127.9	137.7	118.6	107.2	79.5
Ծառայություններ	112.7	115.0	116.0	113.4	108.5	102.1
Զուտ անուղղակի հարկեր	102.4	112.4	114.9	132.1	116.8	84.2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 9.5% նվազում՝ 2008 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրված 0.2% աճի դիմաց<sup>3</sup>: Արդյունաբերական արտադրանքի նվազումը պայմանավորված է հանքագործական

<sup>3</sup> Այսուհետ՝ ցուցանիշները ներկայացված են տնտեսության ճյուղերում ստեղծված համախառն արտադրանքի ծավալներով


արդյունաբերության, մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության և բաշխման ծավալների համապատասխանաբար 11.4, 8.8 և 10.6 տոկոս անկումներով: Չնայած մշակող արդյունաբերության ոլորտում արձանագրվել է անկում, սակայն նրա առանձին ենթաճյուղերում գրանցվել է թողարկման ծավալների աճ, մասնավորապես՝ սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրության (3.3%), մետաղագործական արդյունաբերության (2.1%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրության (38.0%) ճյուղերում:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:** 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության և անտառային տնտեսության համախառն արտադրանքի ծավալի 5% նվազում: Ընդ որում, գյուղատնտեսության անկումը պայմանավորված է անասնաբուծության համախառն արտադրանքի 3.7% և բուսաբուծության 14.4% նվազումներով, իսկ անտառային տնտեսությունն աճել է 5.7%-ով:

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ:** Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները 2009 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում կազմել են շուրջ 40.1 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 21.9%-ով: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 27.6% և աճել 39.1%-ով, իսկ կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 31.8%-ով: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները կազմել են մոտ 2.3 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 37.9%-ով:

Շինարարության հիմնական միջոցներն ըստ տնտեսության ճյուղերի շարունակում են ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, որին բաժին է ընկել կատարված շինարարության ծավալների 36.3 տոկոսը: Հաջորդ մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերն են կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցումը, ինչպես նաև տրանսպորտի և կապի ոլորտները (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի



**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ:** 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2008 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 0.7%-ով: Մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն կապի (23.6%) և ֆինանսական գործունեության (20.2%) ոլորտների ծառայությունները, ինչպես նաև տրանսպորտի (19.7%) կրթության (6.3%) և առողջապահության (6.3%) ծառայությունները: Ծառայությունների նշված ոլորտներից անկում է արձանագրվել միայն ֆինանսական գործունեություն ճյուղում, որտեղ անկումը կազմել է 21.9%, իսկ մյուս ճյուղերում արձանագրվել է աճ:

2009 թվականի հունվար-մարտ ամսին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 287.2 մլրդ դրամ, որը 2008 թվականի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 1.9%-ով, որտեղ մանրածախ առևտուրն աճել է 3.9 իսկ մեծածախ առևտուրը՝ 9.8 տոկոսով:

**ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ:** 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2008 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 11.1%-ով: Բեռնափոխադրումների ծավալն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի բոլոր տեսակների արձանագրվել է անկում (երկաթուղային՝ 4, ավտոմոբիլային՝ 15.6 և մայրուղային խողովակաշարային տեսակը՝ 11.8 տոկոսներով):

2009 թվականի հունվար-մարտին կապի ծառայություններից ստացված հասույթը համադրելի գներով 2008 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 3.4%-ով: Կապի ոլորտում աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ

շարժական կապի աճի՝ կազմելով 2.5%, իսկ ֆիքսված հեռախոսային կապը նախորդ տարվա նկատմամբ համադրելի գներով նվազել է 12.5 տոկոսի չափով:

**ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ:** 2009 թվականի մարտին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 0.7 % գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների գների 0.3% աճով, ոչ պարենային ապրանքների գների 1.4% աճով և ծառայությունների սակագների 1.0% աճով:

2009 թվականի մարտին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 1.4% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 1.0%: Մարտ ամսվա պարենային գների վերը նշված աճը տեղի է ունեցել մարտին՝ փետրվարի համեմատ անվանական փոխարժեքի 19.7% արժեզրկման պարագայում:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ:** 2009 թվականի հունվար-մարտին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 6.6% (76.1 հազ. մարդ), որը պայմանավորված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով համախառն պահանջարկի, ինչպես նաև աշխատուժի նկատմամբ պահանջարկի զգալի նվազմամբ:

2009 թվականի առաջին եռամսյակում միջին ամսական անվանական աշխատավարձը 2008 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 16.4%-ով, ընդ որում՝ բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 18.1%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 80682 դրամ և 123501 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 97899 դրամ:

2009 թվականի առաջին եռամսյակում իրական աշխատավարձի աճը 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ կազմել է 14.1%: Աշխատանքի արտադրողականությունն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.3%-ով, որը պայմանավորված է ՀՆԱ-ի աճի տեմպերի (4.2%՝ հիմնական գներով) համեմատ զբաղվածության համեմատաբար քիչ նվազմամբ (1.3%):

**ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ:** 2009 թվականի հունվար-մարտ ամիսներին տնտեսության արտաքին հատվածում պահպանվել են 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվում են Հայաստան ներհոսող տրանֆերտները և գործոնային եկամուտը, կրճատվում է նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը:

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 781.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 27.7%-ով: Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ տեղի է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների կրճատում. արտահանումը նվազել է 47.3%-ով՝ կազմելով 123.4 մլն դոլար, իսկ ներմուծումը կազմել է 658.5 մլն դոլար<sup>4</sup>, ապահովելով 22.2% անկում: Ներմուծման նվազումը, որը տեղի է ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած) հիմնականում պայմանավորված է բնակչության եկամուտների անկմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Նշենք նաև, որ ներմուծման անկում է արձանագրվել նաև ներդրումային բնույթ ունեցող ապրանքների գծով. հունվար-մարտի ընդհանուր ներմուծման մեջ մոտ 27% կշիռ ունեցող «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի նվազումը 8.4 տոկոսային կետով նպաստել է ներմուծման անկմանը:

2009 թվականի հունվար-մարտ ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը<sup>5</sup> կազմել է 433.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 44 մլն ԱՄՆ դոլարով կամ 9.2 %-ով և կազմելով առաջին եռամսյակի ՀՆԱ-ի 30.3%-ը՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 30.5%-ի դիմաց:

Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը<sup>6</sup>, որը 1997 թվականի առաջին եռամսյակի -0.7-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2005 թվականին հասնելով -0.3-ի, այնուհետև 2006-2008 թվականներին ցուցաբերել է վատթարացման միտում՝ համապատասխանաբար կազմելով -0.4, -0.5 և -0.6, իսկ 2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում խորացման միտումն էապես ավելացել է և կազմել -0.7: Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցի նման վարքագիծը պայմանավորված է եղել վերջին 3 տարիների ընթացքում արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ արդյունք է եղել տնտեսությունում անընդհատ աճող սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև 2003 թվականից արժևորվող փոխարժեքի:

<sup>4</sup> ՄԻՖ գներով:

<sup>5</sup> ՖՕԲ գներով:


<sup>6</sup> Առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն:

2009 թվականի հունվար-մարտի արտահանման 47.3% նվազման առավելագույն՝ 18 տոկոսային կետը պայմանավորված է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման նվազմամբ, որը կազմել է 47.8%: Արտահանման նվազման 7.6 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք», 6.8 տոկոսային կետը՝ «Հանքահումքային արտադրանք» և 5.2 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալների անկմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 50.9, 55.8 և 33.7%:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների արտահանման միջին հակումը 2009 թվականի հունվար-մարտին կազմել է 9% (2008 թվականի առաջին եռամսյակում՝ 15%): Ներմուծման միջին հակումը կազմել է 46%՝ նախորդ տարվա 54%-ի դիմաց:

2009 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով գրանցված արտահանման և ներմուծման անկման հետևանքով զգալի նվազել է ներմուծման ծածկումը արտահանումով՝ կազմելով մոտ 22.1% (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3. 1996-2009 թվականների առաջին եռամսյակների ներմուծման ծածկման գործակիցը<sup>7</sup>, տոկոսներով




<sup>7</sup> Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ՖՕԲ գներով ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցություն:



2009 թվականի առաջին եռամսյակի ՀՀ ներճյուղային<sup>8</sup> առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի գծով վերջին տարիների համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին:

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կան բացասական մնացորդով: «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) և «Արվեստի ստեղծագործություններ» (լրիվ միակողմանի առևտուր) ապրանքախմբերի դրական առևտրային մնացորդները վկայում են մեր երկրի կողմից արտաքին աշխարհի պահանջները բավարարելու մասին:

Գծապատկեր 4. 2009 թվականի առաջին եռամսյակի ներճյուղային առևտուրը



Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ լրիվ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

*Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների.* 2009 թվականի առաջին եռամսյակի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 34.8%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 30%-ը՝ ԵՄ երկրներին, 2008 թվականին համապատասխան ժամանակահատվածի


<sup>8</sup> Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1»՝ լրիվ երկկողմանի առևտուր:

ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 33.1 և 38.6 տոկոս. ԵՄ երկրների համեմատ ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության աճը առաջանցիկ էր: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկվել էին Գերմանիան (առևտրաշրջանառության 7.7%-ը), Չինաստանը (7.3%), ԱՄՆ-ն (5.6%), Թուրքիան (3.6%), Իտալիան (3.3%), Իրանը (2.9%), Ճապոնիան (2.7%), Բուլղարիան (2.7%), Բելգիան (2.6%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (24.6%), Ուկրաինան (5.6%), Վրաստանը (2.8%): Վերջիններին բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության մոտ 95%-ը: Հանրապետության թվով 35 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (80%) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

**ՓՈՒՍԱՐԺԵՔ:** 2009 թվականի առաջին եռամսյակում, ըստ էության, դադարել են նախորդ տարիներին ձևավորված փոխարժեքի արժևորման միտումները: Մասնավորապես՝ եթե ընթացիկ տարվա հունվար ամսին դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 305.5, ապա հունվար-մարտին այն կտրուկ արժեզրկվել է և կազմել 325.56 դրամ՝ արժեզրկվելով 20 դրամով 2008 թվականի նույն ժամանակահատվածում 1 դրամով արժեզրկման դեպքում: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել իր հավասարակշիռ մակարդակից շեղումով, ինչպես նաև ներմուծման անկմամբ, ինչն էլ նվազեցրել է պահանջարկը արտարժույթի նկատմամբ: Նախորդ տարվա հունվար-մարտի միջինի նկատմամբ գրանցվել է դրամի 5.7% արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի 14.3% արժևորման դիմաց: 2009 թվականի միջին իրական արդյունավետ փոխարժեքի<sup>9</sup> ինդեքսը կազմել է 150.7% (1997=100%), իսկ անվանական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը նույն բազային տարվա համեմատ՝ 268.5%: Իրական արդյունավետ փոխարժեքի միջին արժևորումը 2009 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ կազմել է 10.7%: Ընդ որում, նշված ժամանակահատվածում անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 14.9%:

**Գծապատկեր 5. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների միջին արժևորումը 2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում**

<sup>9</sup> Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժմանը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարեւոր արժույթներից բաղկացած «գամբյուղի» նկատմամբ: Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժմանը ու շարժման ուղղությունը եւ կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տեմպերի կողմնորոշիչ հետետություններ անելու համար: Բացի դրանից այն հիմնական ցուցանիշն է, որն բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր եւ գործընկեր երկրների միջև հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:



**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ:** 2009 թվականի առաջին եռամսյակում փողի բազան կազմել է 391.7 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճելով 2.9%: Նույն ժամանակահատվածում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 28.1 %, իսկ առևտրային բանկերի թղթակցային հաշիվները և պարտադիր պահուսները ԿԲ-ում աճել են 191.2%: Կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նվազել է 25.8 տոկոսային կետով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ կազմելով 59.8 %:

Նույն ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է մոտ 6.2%, ընդ որում դրամային ավանդների նպաստումը եղել է բացասական՝ 13.3 տոկոսային կետ, իսկ արտարժույթային ավանդներինը՝ դրական 20.5 տոկոսային կետ: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի առաջին եռամսյակի դրությամբ կազմել են 546.8 մլրդ. դրամ, որից 72.9% արտարժույթով ավանդներն են: Նշենք նաև, որ տնտեսության դոլարայնացման աստիճանը (արտարժույթային ավանդներ/փողի զանգված), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 23.3%, ինչը արտացոլվել է նաև տնտեսության վարկավորման ցուցանիշի վարքագծում: Բանկային համակարգից դուրս կանխիկը դրամական զանգվածի նվազմանը նպաստել է 13.3 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի վարկերը 2009 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 36.2%-ով<sup>10</sup> և ՀՆԱ-ի մեջ կազմել է 14.1%, ինչը 4.1 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (նշենք նաև որ 65.8% կազմել են արտարժույթով

<sup>10</sup> Սույն ցուցանիշում ներառված է ինչպես տնտեսության իրական հատվածի, այնպես էլ Կառավարության վարկավորումը:

վարկերը): Նույն ժամանակահատվածում բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվները նվազել են 67.1%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ աճել 46.5%-ով, աճը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսության վարկավորման 36.3% աճով:

Առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2009 թվականի առաջին եռամսյակում կազմել են 19.22%՝ 2008 թվականի մարտի 17.17% համեմատ: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի մարտին ավանդների տոկոսադրույքը կազմել է 7.36%, ապա 2009 առաջին եռամսյակում այն աճել է 2.28 տոկոսային կետով (9.64%):

Տոկոսադրույքների համանման վարքագիծ է դրսևորվել նաև պարտքի շուկայում. 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 9.63%, ապա 2009 թվականի առաջին եռամսյակում այն կազմել է 9.97%: 2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 13.4 մլրդ դրամ<sup>11</sup>: Հաշվետու տարում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1549 օր: Տոկոսադրույքների աճին նպաստել է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ռեպո տոկոսադրույքի բարձրացումը, որը 2009 թվականի մարտին բարձրացվել է գնաճային ճնշումները մեղմելու տեսանկյունից և կազմել է 7.25%<sup>12</sup> 2008 թվականի մարտի 6.25%-ի դիմաց:

2009 թվականի առաջին եռամսյակում պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը 14%-ով ցածր է եղել առաջարկից, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.64:

Աղյուսակ 2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2009 թվականի առաջին եռամսյակում


Ամիսներ	Հունվար	Փետրվար	Մարտ
Առևտրային բանկերի վարկեր	19.49	18.84	19.22
Առևտրային բանկերի ավանդներ	8.26	8.28	9.64
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	7.00	6.75	7.75

<sup>11</sup> 2009 թվականի մարտին կազմել է 20 մլրդ դրամ:

<sup>12</sup> 2009 թվականի փետրվարին այն կազմել է 6.75%:


### **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՍՍՅԱԿՈՒՄ**

ՀՀ կառավարության ծրագրով 2009 թվականի առաջին եռամսյակում նախատեսվել էր շուրջ 185.6 մլրդ դրամ բյուջետային եկամուտների ստացում: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսության մեջ արձանագրված միտումները հաշվի առնելով՝ ՀՀ կառավարության կողմից վերանայվեց հարկաբյուջետային ծրագիրը, և առաջին եռամսյակում ծրագրված եկամուտների և ծախսերի մի մասի կատարումը հիմնականում տեղափոխվեց չորրորդ եռամսյակ: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների առաջին եռամսյակի ծրագիրը կազմեց 135.4 մլրդ դրամ, իսկ հաշվի առնելով նաև «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 16-րդ հոդվածով սահմանված մուտքերը՝ ծրագիրը կազմում է 139.3 մլրդ դրամ, որի դիմաց փաստացի ստացվել են 141.6 մլրդ դրամի եկամուտներ կամ ծրագրվածի 101.7%-ը: Ընդ որում, հարկերի ու տուրքերի և այլ եկամուտների գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում համապատասխանաբար 3.6%-ով և 8.3%-ով: Պարտադիր սոցիալական ապահովության վճարները և պաշտոնական դրամաշնորհները նույն ժամանակահատվածում զիջել են ծրագրված ցուցանիշները համապատասխանաբար 1.2 և 30 տոկոսով: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 10.5%-ով կամ 16.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հարկերի ու տուրքերի 16.7% նվազմամբ: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների գծով արձանագրվել է մուտքերի աճ՝ համապատասխանաբար 1.2, 24.2 և 68.7 տոկոսով:



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում 5.6 տոկոսային կետով նվազել է հարկերի ու տուրքերի տեսակարար կշիռը՝ կազմելով 75.3%: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 1.8, 0.8 և 3 տոկոսային կետով:

### Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



### Հարկային եկամուտներ

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 102.6 մլրդ դրամ՝ 104.6%-ով ապահովելով ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտները նվազել են 16.7%-ով կամ 20.6 մլրդ դրամով: Ընդ որում, հարկատեսակների մեծամասնության գծով արձանագրվել է մուտքերի անկում:

Հարկային եկամուտների 49.7%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է ավելի քան 51 մլրդ դրամ և 20.1%-ով կամ 12.9 մլրդ դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից ավելի քան 33.6 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 17.4 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են և՛ ներմուծումից, և՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել 2009 թվականի առաջին եռամսյակի բյուջեի եկամուտների վրա: Մասնավորապես.

- սահմանվել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շենք) գերազանցող մասի համար:

- Ֆիզիկական անձանց համար սահմանվել են ԱԱՀ-ով հարկվող՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքներ, մասնավորապես՝ օրենքի համաձայն ապրանքի մատակարարում է համարվում նաև ֆիզիկական անձանց պատկանող՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (այդ թվում՝ ընդհանուր

սեփականություն հանդիսացող գույքի և հողերի) օտարունը (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալուն դրանց ներդրումը):

- Մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարունը, եթե օտարունը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

- Շենքերի և շինությունների օտարման դեպքում կիրառվող ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելու սկզբունքը տարածվել է նաև անավարտ և կիսակառույց շինությունների վրա, ինչպես նաև ավելացվել է, որ անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման գործարքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, բայց ոչ պակաս գույքահարկով հարկման նպատակով՝ օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի բաժնեմասին համապատասխանող արժեքի հինգ տոկոսից՝ հաշվարկված տարեկան կտրվածքով:

- Թույլատրվել է ԱԱՀ-ի հաշվանցում կատարել որոշակի կանխիկ վճարումներ կատարելու դեպքում: Այսպես, արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հարկային հաշիվներում, իսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը: Միանվագ գործարքի գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) 300 հազար դրամը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին



փոխանցումներով վճարումների դեպքում, իսկ ամսվա ընթացքում 300 հազար դրամը չգերազանցող բոլոր միանվագ գործարքների ընդհանուր գումարը 3.0 միլիոն դրամը գերազանցելու դեպքում սահմանված կարգով հաշվանցման ենթակա է այն գործարքի ԱԱՀ-ի ամբողջ գումարը, որի արժեքի հանրագումարով չի գերազանցվել 3 միլիոն դրամի սահմանաչափը:

- Մինչև 2012 թվականի հունվարի 1-ը՝ ոռոգման ջրի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է ձեռք բերված ու մատակարարված ապրանքների և մատուցված ու ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով:

Պետական բյուջեի հարկերի 9%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 9.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 6.3 մլրդ դրամ, որից ավելի քան 2.8 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 2.6 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ, որից 1.8 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկը նվազել է 7.6%-ով կամ 759.2 մլն դրամով: Ընդ որում, նվազել են և՛ հանրապետություն ներմուծված, և՛ հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից ստացված գումարները: Ակցիզային հարկի մուտքերի վրա ազդեցություն են ունեցել հետևյալ օրենսդրական փոփոխությունները՝

- գինեմյուսը և խաղողի գինեմյուսից ստացված խաղողի սպիրտը դուրս են մնացել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից:

- Տարանջատվել են Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափերը: Վերջիններիս համար սահմանվել են ավելի բարձր դրույքաչափեր:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների 15.5%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 15.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 20.8%-ով կամ 4.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական ձեռնարկությունների և ոչ ռեզիդենտների կողմից վճարված շահութահարկի նվազմամբ:

Շահութահարկի մուտքերի վրա հաշվետու ժամանակահատվածում ազդեցություն են գործել հետևյալ օրենսդրական փոփոխությունները.

- ԱԱՀ վճարող չհամարվողներին հնարավորություն է տրվել հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերը նվազեցնել տվյալ հաշվետու տարում:

- ԱԱՀ վճարող չհամարվողներին թույլատրվել է կատարված բոլոր ծախսերը նվազեցնել առանց հաշվի առնելու սահմանված նորմաները, բացառությամբ օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, որոնք նվազեցվում են հատուցման գումարների չափով:

- 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2 տոկոսից և ավելի՝ համախառն եկամտի 10 տոկոսից:

- Համախառն եկամուտը նվազեցվում է Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերի չափով, որոնց համար հարկային մարմիններին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.4 հոդվածով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասով), և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում:

- Հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ

չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:

- ԱԱՀ վճարող չհամարվողները կարող են շահութահարկի կանխավճարներ չկատարել:

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է շուրջ 12 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 11.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 11.4%-ով կամ 1.2 մլրդ դրամով: Եկամտահարկի մուտքերի վրա 2009 թվականի առաջին եռամսյակում ազդեցություն են գործել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված հետևյալ փոփոխությունները.

- անձնական նվազեցումը սահմանվել է 30000 դրամ:

- Մինչև փոփոխությունը հարկային գործակալը առանց հիմնավորող փաստաթղթերի ապրանքների ձեռք բերելիս իրականացնում էր հարկի պահում առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար՝ 3%, այլ կազմակերպությունների համար՝ 15 % դրույքաչափով: Փոփոխությունից հետո այդ պահումն իրականացվում է բոլոր կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նորտարների համար միասնական՝ 11% դրույքաչափով:

- 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2 տոկոսից և ավելի՝ համախառն եկամտի 10 տոկոսից:

- Հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամտի չափով, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով:

- Հայաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում նաև ցանկացած այլ հիմքով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները:

Հաշվետու ժամանակահատվածում մաքսատուրքը կազմել է ավելի քան 6.3 մլրդ դրամ՝ 0.8%-ով կամ 53.5 մլն դրամով զիջելով 2008 թվականի ցուցանիշը և ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 6.1%-ը:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են շուրջ 5.2 մլրդ դրամ՝ 24.5%-ով կամ 1 մլրդ դրամով գերազանցելով 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է խաղատների գործունեության կազմակերպման, տրանսպորտային միջոցների գազալցման, դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման և խաղատների գործունեության, առևտրի իրականացման վայր կազմակերպելու և հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման համար գանձվող հաստատագրված վճարների աճով: Հաստատագրված վճարների վրա հաշվետու ժամանակահատվածում ազդեցություն են գործել հետևյալ օրենսդրական փոփոխությունները՝

- խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում ելակետային տվյալի 4000000-ապատիկը՝ 2500000-ապատիկի փոխարեն:

- Այլ ավտոմատների համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում ելակետային տվյալի 125000-ապատիկը՝ 75000-ապատիկի փոխարեն:

- Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ 50000-ապատիկի փոխարեն:

- Խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 25 տոկոսի չափով՝ 20 տոկոսի փոխարեն:

- Տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ 50000-ապատիկի փոխարեն:

- Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ 50000-ապատիկի փոխարեն:

Պարզեցված հարկից պետական բյուջե է մուտքագրվել 371 մլն դրամ, որը 79.4%-ով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ պայմանավորված 2009 թվականի հունվարի 1-ից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ:

2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 1.1 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 47.8%-ով կամ 991.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարների նվազմամբ:

2009 թվականի առաջին եռամսյակում այլ հարկերից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 1.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 105.6 մլն դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 551.8 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 254.9 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 298.8 մլն դրամ՝ հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները և 265.6 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերը նվազել են 63.7%-ով կամ 2.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2008 թվականի նույն ժամանակահատվածում «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի վճարումներով:

### **Պետական տուրք**

Հաշվետու ժամանակահատվածում *պետական տուրքի* գծով մուտքերը կազմել են 4 մլրդ դրամ՝ ապահովելով ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշի 83%-ը և 16.4%-ով զիջելով 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Պետական տուրքի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, լիցենզավորման և պետական գրանցման համար գանձվող տուրքերի նվազմամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ որոշ տուրքերի գծով արձանագրվել են կանխատեսվածից բարձր ցուցանիշներ: Մասնավորապես, ծրագիրը գերազանցել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների (55.2%-ով), ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման (100.8%-ով) գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նմուշների, ապրանքների ծագման, տեղանունների, ֆիրմային անվանումների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողության (3.6%-ով) համար գանձված տուրքերը:

### **Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ**

2009 թվականի առաջին եռամսյակում պարտադիր սոցիալական ապահովության վճարներից բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 21.5 մլրդ դրամ, որից 17.7 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, շուրջ 3.1 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 806.2 մլն դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային ծրագիրը կատարվել է 98.8%-ով, իսկ 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ դրանք աճել են 1.2%-ով կամ 251.2 մլն դրամով: «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումները կատարում են սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից:

### **Պաշտոնական դրամաշնորհներ**

2009 թվականի առաջին եռամսյակում արտաքին դոնորների կողմից ՀՀ պետական բյուջեին տրամադրվել են շուրջ 4.3 մլրդ դրամ պաշտոնական տրանսֆերտներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 70%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով, ինչպես նաև այն հանգամանքով, որ թվով 12 դրամաշնորհային ծրագրերի գծով, այդ թվում՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրերի գծով նախատեսված մուտքերը չեն ստացվել: ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի կողմից հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրվածի 40.5%-ը: Շուրջ 1.3 մլրդ դրամ ստացվել է եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար՝ կազմելով ծրագրվածի 52%-ը: Միևնույն ժամանակ, 1.2 մլրդ դրամ է տրամադրվել Եվրամիության պարենային ապահովության ծրագրի շրջանակներում, որի գծով 2009 թվականի պետական

բյուջեում մուտքեր չեն նախատեսվել: Շուրջ 244.1 մլն դրամ ստացվել է Լինսի հիմնադրամի կողմից՝ Երևանի փողոցների վերանորոգման և ճանապարհաշինության ծրագրերի շրջանակներում, որոնք նույնպես չեն նախատեսվել ընթացիկ տարվա պետական բյուջեում: Առաջին եռամսյակում 67.5 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 24.2%-ով:

### **Այլ եկամուտներ**

Պետական բյուջեի այլ եկամուտները 2009 թվականի առաջին եռամսյակում կազմել են շուրջ 9.2 մլրդ դրամ և ապահովել 108.3% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի ծրագրի գերազանցմամբ: Նշված եկամուտները կազմել են համապատասխանաբար 980.6 մլն դրամ՝ նախատեսված 655.5 մլն դրամի դիմաց, 214.4 մլն դրամ՝ նախատեսված 60 մլն դրամի դիմաց և 1.3 մլրդ դրամ՝ նախատեսված 1.2 մլրդ դրամի դիմաց: Հարկ է նշել, որ, բացառությամբ իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների, մյուս բոլոր եկամտատեսակների գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում: 56.9%-ով ավել մուտքեր են ապահովվել պետության կողմից տված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսների գծով, որոնք կազմել են 167.3 մլն դրամ: Մասնավորապես ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները կազմել են 80.4 մլն դրամ՝ նախատեսված 46 մլն դրամի դիմաց, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանի կառավարության կողմից նախորդ տարվա պարտավորության գծով կատարված վճարումը ՀՀ Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվարին: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները կազմել են 86.9 մլն դրամ՝ նախատեսված 60.6 մլն դրամի դիմաց:


2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 68.7%-ով կամ 3.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից կատարված վճարումներով (շուրջ 2.1 մլրդ դրամ), ռադիոհաճախականության օգտագործման վճարի (1.1 մլրդ դրամով) մուտքերի աճով:



**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՍՍՅԱԿՈՒՄ**

ՀՀ կառավարության ծրագրով 2009 թվականի առաջին եռամսյակում նախատեսվել էր շուրջ 206.9 մլրդ դրամ ծախսերի կատարում, որն այնուհետև պակասեցվեց՝ սահմանվելով 184.8 մլրդ դրամ: Փաստացի ծախսերը նույն ժամանակահատվածում կազմեցին 164.7 մլրդ դրամ, մասնավորապես՝ 148.5 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 16.2 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Պետական բյուջեի ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 89.2%-ով, ընդ որում, շեղումների 72.9%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին: Բյուջետային ծախսերի արձանագրված կատարողականը մասամբ արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականի հետևանք է:

**ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը**



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 14.1%-ով, որը կազմում է 20 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 91.1%-ով, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 10.8%-ով կամ 14.6 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 13.5 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով ծրագրի 86.5%-ը, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 21.2%-ով: 838.1 մլն դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական

ապահովության վճարներին: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 27.7 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 89.2%-ը և 12%-ով գերազանցում է 2008 թվականի առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշը: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 12%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում 3.6 մլրդ դրամ է տրամադրվել պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 99.1%-ը: Մասնավորապես՝ 2.9 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 707.3 մլն դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 20.7%-ով՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Անցած եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 3.6 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 85.1%-ը:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 11.6%-ը կամ 17.3 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները: Մասնավորապես՝ 6.9 մլրդ դրամ տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ամբողջությամբ տրամադրվել են նաև համայնքների համար նախատեսված այլ ընթացիկ դրամաշնորհները, որոնք կազմել են 312.5 մլն դրամ: Մնացած դրամաշնորհների գծով արձանագրվել են որոշակի շեղումներ: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ դրամաշնորհներն ավելացել են 4.8%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրվող ընթացիկ դրամաշնորհների աճով, որոնք համապատասխանաբար 31%-ով և 121.3%-ով գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները:

2009 թվականի առաջին եռամսյակում 26.5 մլրդ դրամ է տրամադրվել այլ ծախսերին՝ կազմելով եռամսյակային ծրագրի 85.7%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ ծախսերն աճել են 5.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 37.4%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 55.5 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 94.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 13.5%-ով: Մասնավորապես՝ 43.2 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 12.3 մլրդ դրամ՝ նպաստներին, որոնք կազմել են ծրագրի համապատասխանաբար 97.8%-ը և 84.5%-ը:

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են ավելի քան 16.2 մլրդ դրամ կամ ծրագրի 75.0%-ը: Մասնավորապես՝ 18 մլրդ դրամ տրամադրվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 73%-ը և 29.6%-ով գերազանցելով 2008 թվականի ցուցանիշը: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 1.8 մլրդ դրամ՝ ծրագրի կատարումն ապահովելով 59.3%-ով և կազմելով 2008 թվականի փաստացի ցուցանիշի 49.3%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն աճել են 58.1%-ով, որը մեծ մասամբ պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների ձեռք բերման ծախսերի աճով:

### **Գործառնական դասակարգում**

2009 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 23.6 մլրդ դրամ՝ 87.6%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ», «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում», «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» և «Արտաքին հարաբերություններ» դասերի գծով: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 9.4%-ով կամ ավելի քան 2 մլրդ դրամով:

Օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 2.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 81.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նշված մարմինների պահպանման ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 26.3%-ով: Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 6.5 մլրդ դրամ՝ նախատեսված 8.3 մլրդ դրամի փոխարեն: Տնտեսումները հիմնականում առաջացել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման (արտաբյուջե) ֆոնդերի ծախսերում:

Հաշվետու ժամանակահատվածում, մասնավորապես, 1.5 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին հարաբերությունների ծրագրերին, որը կազմել է առաջին

եռամսյակի ծրագրային հատկացումների 87.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսերը նվազել են 2.8%-ով:

Ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 371 մլն դրամ կամ նախատեսվածի 84.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասի ցածր կատարողականով, որոնց գծով նախատեսված 198.9 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 166 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 5.7%-ով: Խմբի ծախսերից 93.2 մլն դրամն ուղղվել է աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններին, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 86.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերի թերակատարմամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 26.4%-ով՝ հիմնականում պայմանավորված քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերի աճով:

2009 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր բնույթի այլ ծառայություններին տրամադրվել է 111.8 մլն դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 85.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերի թերակատարմամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերը աճել են 2.4%-ով:

2009 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքներին տրամադրվել է ավելի քան 1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 89%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ և ԱՄՆ կառավարության աջացությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: 2008 թվականի առաջին եռամսյակի ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքների համեմատ ծախսերը աճել են 62.6%-ով՝

պայմանավորված գիտության բնագավառի ծրագրերին հատկացված միջոցների ավելացմամբ:

Առաջին եռամսյակի ընթացքում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին տրամադրվել է 341.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 76.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով: 2008 թվականի առաջին եռամսյակի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համեմատ ծախսերն աճել են 5.2%-ով:

Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին տրամադրվել է շուրջ 732.6 մլն դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 65.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերի (61.9%), Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագրի (30.8%), Վիճակագրական մաստեր-պլանի մշակման և վիճակագրական կարողությունների ուժեղացման միջոցով տեխնիկական աջակցության դրամաշնորհային ծրագրի (36.5%), Պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագրի (24.9%), Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագրի (8%), ցածր կատարողականով: Նշված հանգամանքով պայմանավորված այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 47.2%-ով:

Պետական պարտքի գծով գործառնություններին տրամադրվել է շուրջ 3.6 մլրդ դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 29.1%-ով՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվել են շուրջ 7 մլրդ դրամի ընդհանուր բնույթի տրանսֆերտներ՝ ապահովելով 99.9% կատարողական և 29.3%-ով գերազանցելով 2008 թվականի նույն ցուցանիշը: Աճը պայմանավորված է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման և Ազգային ժողովի

ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտպանության բնագավառին հատկացվել է շուրջ 21.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 93.3%-ով կատարում: Մասնավորապես, 20.7 մլրդ դրամ հատկացվել է ռազմական պաշտպանությանը, 649.2 մլն դրամ՝ այլ դասերին չպատկանող պաշտպանական ծախսերին, 26.1 մլն դրամ՝ արտաքին ռազմական օգնությանը: Նախորդ տարվա համեմատ պաշտպանության ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 12.1 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 79.1% կատարողական: Ընդ որում, բոլոր հինգ խմբերում առկա են ծրագրից շեղումներ, որոնց գերակշիռ մասը բաժին է ընկել ոստիկանության և ազգային անվտանգության դասերին և պայմանավորված է տնտեսումներով:

Նշված բաժնի ծախսերի 69.4%-ն ուղղվել է հասարակական կարգի և անվտանգության պահպանության, 6.6%-ը՝ փրկարար ծառայության, 12.9%-ը՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, 3%-ը՝ դատախազության, 8.1%-ը՝ կալանավայրերի ծախսերի ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 8.4 մլրդ դրամ տրամադրվել է հասարակական կարգի և անվտանգության բնագավառի ծրագրերին՝ նախատեսված 11.3 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 6.3 մլրդ դրամ տրամադրվել է ոստիկանությանը՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը, 2.1 մլրդ դրամ՝ ազգային անվտանգությանը: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ ազգային անվտանգությանը տրամատրված ծախսերը աճել են 12.7%-ով: Փրկարար ծառայության ծախսերը կազմել են 800.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.1%-ով կատարում: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ փրկարար ծառայությանը տրամադրված ծախսերը աճել են 80.6%-ով: Դատական գործունեությանը և իրավական պաշտպանությանը տրամադրվել է շուրջ 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 88.1%-ով կատարում: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերը աճել են 48.4%-ով: Դատախազության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 367.1 մլն դրամ կամ ծրագրի 82.2%-ը: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ դատախազությանը տրամադրված ծախսերը աճել են 4.3%-ով: Շուրջ 978 մլն դրամ է տրամադրվել կալանավայրերին՝ կազմելով

ծրագրի 97.5%-ը: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ կալանավայրերին տրամադրված ծախսերը աճել են 41.5%-ով:

Տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերը 2009 թվականի առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 16.3 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 94.7%-ը: Ընդ որում, ծրագրից շեղումներ առկա են ոռոգման, գյուղատնտեսության և տրանսպորտի խմբերում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական հարաբերությունների ծախսերն աճել են 90.5%-ով կամ շուրջ 7.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է էներգետիկային և գյուղատնտեսության ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում ավելի քան 435.6 մլն դրամ է տրամադրվել *ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների խմբի ծրագրերին* ապահովելով եռամսյակային ծրագրի 84.7% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի ցածր կատարողականով, որոնք կազմել են 92.5 մլն դրամ կամ նախատեսվածի 71.7%-ը:

Խմբի հետևյալ ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական, այդ թվում՝ «Հիդրոօդերևութաբանական ծառայություններ» (շուրջ 99.8 մլն դրամ), «Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացում» (31.7 մլն դրամ), «Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» (143.4 մլն դրամ) և «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» (12.0 մլն դրամ) ծրագրերի գծով:

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներին ուղղվել է 4.2 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 68.0%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է «գյուղատնտեսական կենդանիների պատվաստման», ինչպես նաև արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն ավելացել են 31.6%-ով կամ 1.0 մլրդ դրամով:

Անցած ժամանակահատվածում ավելի քան 1.3 մլրդ դրամ են կազմել գյուղատնտեսության ոլորտի ծախսերը՝ կազմելով ծրագրվածի 58.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ

իրականացվող Թռչնագրիպին հակազդելու և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայական հնարավորությունն ֆերմերներին» ծրագրերի ցածր կատարողականով, որոնց շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 96.2 և ավելի քան 216.7 մլն դրամի ծախսեր՝ նախատեսված շուրջ 699.2 և 511.2 մլն դրամի փոխարեն: Հատկացումներ են կատարվել նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման (շուրջ 339.0 մլն դրամ), ինչպես նաև Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերին (շուրջ 14.0 մլն դրամ):

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում ծախսվել է 32.2 մլն դրամ՝ նախատեսված ավելի քան 56.3 մլն դրամի դիմաց, իսկ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայական հնարավորությունն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի գծով կատարված ծախսերը կազմել են 7.1 մլն դրամ՝ նախատեսված շուրջ 19.5 մլն դրամի դիմաց: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրով կատարված ծախսերը կազմել են շուրջ 18.4 մլն դրամ կամ նախատեսվածի 35.8%-ը, իսկ Թռչնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման նպատակով տրամադրվող ճապոնական դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 75.5%-ով՝ կազմելով 35.2 մլն դրամ:

Նշենք, որ գյուղատնտեսության ոլորտի հետևյալ ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական, այդ թվում՝ «Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումներ» (6.0 մլն դրամ), «Գյուղական խորհրդատվական ծառայությունների» (27.2 մլն դրամ), «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում» (32.6 մլն դրամ) և «Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում» (13.4 մլն դրամ), «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման



միջոցառումներ»(շուրջ 7.9 մլն դրամ), իսկ մնացած ծրագրերի ծախսերը կազմել են 138.8 մլն դրամ կամ նախատեսվածի 84.3%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում *անտառային տնտեսության ծախսերը* կազմել են շուրջ 135.1 մլն դրամ և 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական ծառայությունների իրականացման համար կատարված հատկացումները, որոնց համար նախատեսվել և տրամադրվել է 112.0 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անտառային տնտեսության ծախսերն ավելացել են 13.7%-ով կամ 16.3 մլն դրամով:

2009 թվականի առաջին եռամսյակում շուրջ 2.8 մլրդ դրամ են կազմել ոռոգման ոլորտի ծախսերը` ապահովելով ծրագրվածի 72.7%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 10 ծրագրեր, այդ թվում` արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են հինգ վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որի շրջանակներում օգտագործվել է նախատեսվածի 52.0%-ը կամ ավելի քան 645.0 մլն դրամ:

100% կատարողական է ապահովվել խմբում ընդգրկված «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» (շուրջ 1.1 մլրդ դրամ) և «Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» (15.9 մլն դրամ) ծրագրերի գծով:

*Վառելիքի և էներգետիկայի* բնագավառում 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 7.4 մլրդ դրամ` 108.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Գերազանցումը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի բարձր կատարողականով, որի շրջանակներում նախատեսված ավելի քան 4.6 մլրդ դրամի փոխարեն օգտագործվել է շուրջ 6.5 մլրդ դրամ: Հիմնականում նշված ծրագրի ֆինանսավորման հետ կապված` 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ արձանագրվել է վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերի աճ շուրջ 6.9 մլրդ դրամով :

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 15.8 մլն դրամ է տրամադրվել «Միջուկային վառելիք» դասին` կազմելով ծրագրի 44.5%-ը:

2009 թվականի առաջին եռամսյակում 6.7 մլրդ դրամ են կազմել «Վառելիքի այլ տեսակներ» դասի ծախսերը՝ ապահովելով ծրագրվածի 137%-ը: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 108.2 մլն դրամի ծախսեր՝ 377%-ով գերազանցելով նախատեսվածը, իսկ ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի գծով, ինչպես նշվել է, օգտագործվել են նախատեսվածից 40.1%-ով ավել միջոցներ կամ շուրջ 6.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ոլորտի ծախսերը ավելացել են 6.4 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 698.5 մլն դրամ են կազմել էլեկտրաէներգիայի ծախսերը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 36.6%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագրի ցածր կատարողականով, որը կազմել է 632.6 մլն դրամ կամ 38.2%:

2009 թվականի առաջին եռամսյակում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* ոլորտում ՀՀ պետական բյուջեից իրականացվել են շուրջ 1.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 13.5%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են «Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն» ծրագրի ծախսերին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը ավելացել են 35.7%-ով կամ 409.2 մլն դրամով:

Անցած ժամանակահատվածում տրանսպորտի բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 5.1 մլրդ դրամ՝ 91.1%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Խմբի ծախսերի 85.6%-ը կամ ավելի քան 4.3 մլրդ դրամը կազմել են ճանապարհային, 0.8%-ը կամ 40.5 մլն դրամը՝ օդային և 13.6%-ը կամ 692.0 մլն դրամը՝ խողովակաշարային և այլ տրանսպորտի ծախսերը, որոնք համապատասխանաբար 91.1, 36.9 և 99.0 տոկոսով ապահովել են եռամսյակային ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ խմբում ընդգրկված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով, որի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.0 մլրդ դրամ՝ նախատեսված 1.6 մլրդ դրամի դիմաց:

Օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում նույնպես արձանագրվել է ցածր կատարողական՝ 36.9%: Շեղումը հիմնականում

պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի կատարման ցածր ցուցանիշով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը ավելացել են 9.9%-ով:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 692 մլն դրամ՝ 99%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով կամ 40.4 մլն դրամով:

2009 թվականի առաջին եռամսյակում *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 95.8 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Կատարված հատկացումներն ուղղվել են հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ոլորտի ծախսերը նվազել 71.4 մլն դրամով:

*Այլ բնագավառների* (գրոսաշրջություն և զարգացման բազմապատակ ծրագրեր) ծախսերը կազմել են 153.3 մլն դրամ կամ նախատեսվածի 78.2%-ը: Նշված գումարն ուղղվել է զարգացման բազմապատակ ծրագրերի ֆինանսավորմանը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 47.7% կամ շուրջ 139.8 մլն դրամով:

Ջրոսաշրջության ոլորտին պետական աջակցության նպատակով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից նախատեսված 36 մլն դրամը չի օգտագործվել:

2009 թվականի առաջին եռամսյակում տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 24.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 94%-ով: Մասնավորապես՝ ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի հարցերի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին հատկացվել է 8.9 մլն դրամ, իսկ լեռնարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին՝ 15.9 մլն դրամ, որոնք ապահովել են համապատասխանաբար 85 և 100 տոկոս կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ոլորտի ծախսերը նվազել շուրջ 2.5 մլն դրամով:

2009 թվականի առաջին եռամսյակում *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* խմբի փաստացի ցուցանիշը կազմել է -1.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 49.7%-ով: Ընդ որում, խմբի ծախսերը կազմել են 690.5 մլն դրամ կամ ծրագրի 85.6%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից

մուտքագրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսված գումարի 62.7%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ վերոհիշյալ ծախսերը աճել են 1.0 մլրդ դրամով:

2009 թվականի առաջին եռամսյակում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 778.2 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 72.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի չկատարման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 67.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման դրամաշնորհային և վարկային ծրագրերի և Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով:

Հաշվետու ժամանակահատվածում աղբահանում խմբում նախատեսված շուրջ 5.8 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է *«Ռադիոակտիվ թափոնների վնասագերծում» ՓԲԸ-ին* որպես պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով:

2009 թվականի առաջին եռամսյակում *օդի աղտոտման դեմ պայքարի* ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են ավելի քան 22.2 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 97.5% կատարողական, ինչը հիմնականում պայմանավորված է օդի աղտոտվածության մոնիտորինգի դիտացանցի արդիականացման և մոնիտորինգային տվյալների ներկայացուցչության ապահովման ծառայությունների գծով ծախսերը չկատարելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով: Թափոնների ուսումնասիրության ծառայությունների և ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայությունների ձեռք բերման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 1.3 մլն դրամ և 20.9 մլն դրամ:

*Կենսաբազմազանության և բնության պաշտպանության* ծրագրերին ուղղվել է ավելի քան 84.9 մլն դրամ՝ 12.4%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված համապատասխանաբար շուրջ 493.7 մլն դրամ և 59.7 մլն դրամ միջոցները

չօգտագործելու հանգամանքով: Չեն կատարվել նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագիրը, Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները և ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագիրը, որոնց համար նախատեսվել էին համապատասխանաբար 493.7 մլն դրամ, 59.7 մլն դրամ և 1.1 մլն դրամ միջոցներ: 16.7%-ով է կատարվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված շուրջ 15.1 մլն դրամի դիմաց օգտագործվել է 2.5 մլն դրամ: Նշենք, որ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի մյուս ծրագրերն իրականացվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծախսերն աճել են 1.7%-ով:

*Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերը* կազմել են ավելի քան 665.3 մլն դրամ և ապահովել ծրագրի 184.5% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի և Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի բարձր կատարողականով: Դրանով է նաև պայմանավորված նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերի 88.4% աճը: Մասնավորապես՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 176.6 մլն դրամ և 174.5 մլն դրամ ծախսեր կամ գերազանցել են նախատեսվածը 12.1 և 4.7 անգամ: Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 68.9 մլն դրամ՝ 2.5 անգամ գերազանցելով ծրագիրը: Միևնույն ժամանակ նշենք, որ թվով 13 ծրագրերի գծով նախատեսված ծախսերը չեն կատարվել: Հաշվետու ժամանակահատվածում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով օգտագործվել է ավելի քան 162.2 մլն դրամ կամ ծրագրի 90.8%-ը, իսկ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը կազմել են ավելի քան 76.5 մլն դրամ՝ կատարելով եռամսյակային ծրագրի 95.7%-ը: Հարկ է նշել, որ տվյալ խմբում նախատեսված ծրագրերից երկուսը՝ «Հիդրոերկրաբանական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ին

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարման նպատակով պետական աջակցությունը և բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ձեռք բերումը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 3.4 մլն դրամ և 3.2 մլն դրամ:

2009 թվականի առաջին եռամսյակում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.6 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 65.4%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերը նվազել են 21.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի, ինչպես նաև 2009թ. պետական բյուջեից Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի ֆինանսավորմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 298.2 մլն դրամ է տրամադրվել բնակարանային շինարարության ոլորտին՝ կազմելով ծրագրվածի 59.6%-ը: Շեղումը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը չկատարելու հանգամանքով, որոնց գծով նախատեսվել էին 200 մլն դրամ միջոցներ: 298.2 մլն դրամն ուղղվել է անավարտ շինարարության բնակչինարարական կոպերատիվների փայտատերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության տրամդրմանը՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության ծախսերը նվազել են 68.8%-ով, որը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը չկատարելու հանգամանքով:

Բաժնի ծախսերի 74.6%-ն ուղղվել է ջրամակատարման բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 66.7%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի ցածր կատարողականով և դրամաշնորհային ծրագրերի չկատարման հանգամանքով: Խմբում նախատեսված 13 ծրագրերից միջոցներ են օգտագործվել 9-ի համար, իսկ թվով 4 դրամաշնորհային ծրագրերը չեն կատարվել: Դրանք են՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման, Գերմանիայի

զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու, ՀՀ Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի վերականգնման դրամաշնորային ծրագրերը, որոնց համար նախատեսվել էին համապատասխանաբար 262.3 մլն դրամ, 259.1 մլն դրամ, 177.7 մլն դրամ և 116.3 մլն դրամ միջոցներ: Ցածր կատարողական է ապահովել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը, որի շրջանակներում ծախսվել է ավելի քան 481 մլն դրամ կամ նախատեսվածի 52.8%-ը, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը, որի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 230 մլն դրամ միջոցներ կամ նախատեսվածի 50.7%-ը, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիրը, որի գծով ծախսերը կազմել են 34.8 մլն դրամ կամ նախատեսվածի 18.9%-ը, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիրը, որի շրջանակներում օգտագործվել է 6.2 մլն դրամ միջոցներ՝ ապահովելով 47.7% կատարողական: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 884.2 մլն դրամ՝ 3.5 անգամ գերազանցելով ծրագիրը: Ծրագրի 19.6%-ով գերազանցում է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի գծով (նախատեսված 67.6 մլն դրամի դիմաց օգտագործվել է ավելի քան 80.9 մլն դրամ):

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ամբողջությամբ կատարվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սուբսիդավորումը՝ համապատասխանաբար 215.8 մլն դրամի և 9.6 մլն դրամի չափով:

2009 թվականի առաջին եռամսյակում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են ավելի քան 22.5 մլն դրամ կամ ծրագրի 86.3%-ը: Նախորդ տարվա համեմատ ջրամատակարարման բնագավառի ծախսերն աճել են 3.1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում ավելի քան 192 մլն դրամ է օգտագործվել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 51.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 28.8%-ով:

*Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* համար կատարվել են ավելի քան 540 հազար դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի կատարումը 27%-ով, իսկ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի գծով կատարվել են 177.5 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 86.5%-ը: Նշված կատարողականները ևս մեծ մասամբ պայմանավորված են այս խմբերում նախատեսված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով: Դրանով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 50.7%-ով նվազումը:

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից *առողջապահության* ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 8.7 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 81.1%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման առաջին և երկրորդ վարկային ծրագրերի, ինչպես նաև զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 10.7%-ով՝ պայմանավորված բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների և մասնագիտացված բժշկական ծառայությունների ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից ծախսվել է ավելի քան 376.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 44%-ը:

2009 թվականի առաջին եռամսյակում արտահիվանդանոցային ծառայությունների ձեռք բերման նպատակով տրամադրվել է ավելի քան 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 88.4%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ պարաբժշկական ծառայություններում ներառված՝ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի շրջանակներում նախատեսված շուրջ 358.5 մլն դրամը չի օգտագործվել:



Արտահիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերի 40.6%-ը կամ շուրջ 1.3 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական, 31.0%-ը կամ 970.4 մլն դրամը՝ մասնագիտացված բժշկական, 5.0%-ը կամ շուրջ 156.3 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 23.4%-ը կամ շուրջ 733.9 մլն դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է համապատասխանաբար 99.1, 96.3, 99.6 և 67.1 տոկոսով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերն ավելացել են 10.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է մասնագիտական բժշկական ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում հիվանդանոցային ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են շուրջ 4.3 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում նախատեսվածի 99.8%-ը: Խմբի ծախսերի 27.6%-ը կամ 1.2 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային, 29.0%-ը կամ ավելի քան 1.2 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային և 43.4%-ը կամ շուրջ 1.9 մլրդ դրամը՝ բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների ծախսերը, որոնք համապատասխանաբար 99.9, 99.6 և 100 տոկոսով ապահովել են եռամսյակային ծրագրի կատարումը:

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից շուրջ 439.4 մլն դրամ տրամադրվել է հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը՝ 98.2%-ով ապահովելով նախատեսվածը: Խմբում ընդգրկված են 7 ծրագրեր, որոնց գծով նախատեսված միջոցներն ամբողջովին ծախսվել են, բացառությամբ հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների, որոնց կատարողականը կազմել է 95.9%:

2009 թվականի առաջին եռամսյակում այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը կազմել են 422.2 մլն դրամ կամ ծրագրի 27.5%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 18 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են չորս վարկային և երեք դրամաշնորհային ծրագրեր: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման առաջին և երկրորդ վարկային ծրագրերի ցածր կատարողականով, որոնց շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 9.5 և 15.0 մլն դրամի ծախսեր՝ նախատեսված 366.0 և շուրջ 665.0 մլն դրամի փոխարեն:

Նշված խմբի ծախսերում, բացի արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերից, մեծ տեսակարար կշիռ ունեն նաև դատաբժշկական և գենետիկ

ծառայությունների գծով պետական պատվերի ծախսերը (36.8 մլն դրամ) և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվերի ծախսերը (շուրջ 44.7 մլն դրամ), որոնք նախատեսված ամբողջ ծավալով կատարվել են:

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառներում 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից կատարվել են շուրջ 3.1 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 87.6%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է արվեստի, թանգարանների և ցուցահանդեսների, հրատարակչությունների, խմբագրությունների, հեռուստառադիոհաղորդումների ու քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհմիությունների գծով պետական պատվերի դասերում ընդգրկված ծրագրերի ցածր կատարողականի արդյունքում: 2008 թվականի առաջին եռամսյակի համեմատ հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ծախսերը ավելացել են 12.3%-ով:

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում ավելի քան 333.7 մլն դրամ է տրամադրվել *հանգստի և սպորտի* ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 94.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տվյալ ծախսերն աճել են 18.3%-ով՝ պայմանավորված 2009 թվականի պետական բյուջեից՝ Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում ինչպես նաև Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովում նոր ծրագրերի հատկացումներով:

Հաշվետու ժամանակահատվածում *մշակութային ծառայությունների* հատկացվել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 85.9%-ը: Շեղումը պայմանավորված է արվեստի ու թանգարաններ և ցուցահանդեսներ դասերի ծրագրերի ցածր կատարողականով:

204.9 մլն դրամ է տրամադրվել գրադարաններին՝ ապահովելով նախատեսվածի 94.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրադարանների ծախսերն աճել են 29.4%-ով, պայմանավորված գրադարանների հատկացումների աճով: 238.2 մլն դրամ է տրամադրվել թանգարաններին և ցուցահանդեսներին կազմելով ծրագրով նախատեսվածի 77.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 8.6%-ով: Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը կազմել են 34 մլն դրամ՝ կամ ծրագրով

նախատեսվածի 99.6%-ը: Այլ մշակութային կազմակերպությունների գծով օգտագործվել է 128.7 մլն դրամ կամ եռամսյակի համար նախատեսված հատկացումների 87%-ը: Արվեստի ոլորտի ֆինանսավորմանը տրամադրվել է 704.7 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 83.7%-ը: Անցած ժամանակահատվածում ամբողջությամբ օգտագործվել են կինեմատոգրաֆիայի բնագավառի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 125.5 մլն դրամ, և 4.1%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծախսերը: 2009 թվականի առաջին եռամսյակում հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 14.6 մլն դրամ կամ ծրագրի 91.6%-ը: Տվյալ ծախսերը 79.8%-ով զիջել են 2008 թվականի նույն ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 92.9%-ով ապահովելով ծրագրային հատկացումները, և 5.5%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնավորապես՝ 1.1 մլրդ դրամ (98.1%) են կազմել հեռուստահաղորդումների, 93.9 մլն դրամ (57.7%)՝ հրատարակչությունների և խմբագրությունների պահպանման, 13.8 մլն դրամ (100%)՝ տեղեկատվության ձեռք բերման ծախսերը:

*Կրոնական և հասարակական այլ ծառայություններին* 2009 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել է 60 մլն դրամ՝ նախատեսված 140.1 մլն դրամի դիմաց, որից 41.9 մլն դրամը հատկացվել է (59.6%) երիտասարդական ծրագրերին, 18.1 մլն դրամը (25.9%)՝ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և արհմիություններին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրոնական և հասարակական այլ ծառայությունների ծախսերն աճել են 56.3%-ով:

2009 թվականի առաջին եռամսյակում *այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի ծրագրերի* շրջանակներում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 84.5 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 87.3%-ը, և 10.3%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2009 թվականի առաջին եռամսյակում *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 19.9 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 97.1% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է հանրակրթական ուսուցման, բարձրագույն մասնագիտական կրթության,

արտադարձական դաստիարակության և կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 4.1 մլրդ դրամ տրամադրվել է *նախադարձական և տարրական ընդհանուր կրթությանը*, որն ապահովել է ծրագրի 98.8% կատարողական: Նշված խմբում ներառված բոլոր ծրագրերը գրեթե ամբողջությամբ կատարվել են: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է նշված ծախսերի 27.9% աճ՝ պայմանավորված հանրակրթական ուսուցման ծախսերի ավելացմամբ:

Կրթության ոլորտի ծախսերի 54.5%-ն ուղղվել է *միջնակարգ ընդհանուր կրթությանը*: Այն կազմել է ավելի քան 10.8 մլրդ դրամ (որից 7.8 մլրդ դրամը՝ հիմնական և 3 մլրդ դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծախսերն են)՝ ապահովելով նախատեսված ծրագրի 98.6% կատարողական: Միջնակարգ ընդհանուր կրթության խմբում համեմատաբար ցածր՝ 92.5% և 66.7% կատարողականներ են արձանագրվել արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպման և երաժշտական դպրոցներում կրթաթոշակի ծախսերում, որոնք կազմել են համապատասխանաբար 271.8 մլն դրամ և 874 հազար դրամ: Նշված խմբում ընդգրկված մյուս ծրագրերն ապահովել են 100% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի 20.2% աճ, որը ևս պայմանավորված է հանրակրթական ուսուցման ծախսերի ավելացմամբ:

2009 թվականի առաջին եռամսյակում *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* ծախսերը կազմել են շուրջ 973.9 մլն դրամ կամ նախատեսված հատկացումների 98.8%-ը, որից 381.9 մլն դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 592 մլն դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 22.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում *բարձրագույն կրթության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.4 մլրդ դրամ (որից շուրջ 1.3 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության և 106.1 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն են)՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 90.6%-ով կատարում: Ծրագրից շեղումը պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 23.5%-ով:

*Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* ծախսերը 2009 թվականի առաջին եռամսյակում կազմել են շուրջ 513.1 մլն դրամ (որից շուրջ 372.4 մլն դրամը՝ արտադպրոցական դաստիարակության, իսկ 140.7 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են)՝ ապահովելով ծրագրի 82.3%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է մարզակառույցներին, մարզադպրոցներին և մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման ծախսերը չկատարելու հանգամանքով, որի գծով նախատեսվել էր 50 մլն դրամի օգտագործում, ինչպես նաև դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայությունների 13.1% կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 25%-ով, որը հիմնականում պայմանավորված է արտադպրոցական դաստիարակության և հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մանսագետների վերապատրաստման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 94.5%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերի ցածր կատարողականի արդյունքում, որոնք կազմել են համապատասխանաբար 120.2 մլն դրամ կամ նախատեսվածի 68.7%-ը և 49.8 մլն դրամ կամ նախատեսվածի 56.6%-ը: Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների շրջանակներում մի շարք այլ ծրագրերի գծով ևս արձանագրվել է ցածր կատարողական: Մասնավորապես՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների ծախսերը կատարվել են 62.8%-ով, հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման ծախսերը՝ 34.7%-ով, ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման ծախսերը 14.3%-ով: Նշենք, որ խմբում ընդգրկված ծրագրերից երկուսի՝ ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեղալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման և բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների ծախսերը չեն կատարվել, որոնց համար առաջին եռամսյակում նախատեսվել էին համապատասխանաբար 39.5 մլն դրամ և 12.8 մլն

դրամ միջոցներ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության, ինչպես նաև Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրերի գծով արձանագրվել է նախատեսված ցուցանիշների համապատասխանաբար 18.9 % և 10.5% գերազանցում (նախատեսված 290.1 մլն դրամի և 76 մլն դրամի դիմաց օգտագործվել է համապատասխանաբար 345 մլն դրամ և 83.9 մլն դրամ): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերն աճել են 31%-ով, որը հիմնականում պայմանավորված է կրթական օբյեկտների և ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 105 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 91.1% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 20.5%-ով, որը պայմանավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության պետական կոմտեի գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման պահպանման ծախսերը խմբում ընդգրկելու հանգամանքով:

2009 թվականի առաջին եռամսյակում սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 55.9 մլրդ դրամ՝ 93.3%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Բաժնի բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ: 2008 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը աճել են 10.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 265 մլն դրամ է հատկացվել *վատառողջության և անաշխատունակության* խմբի ծախսերին՝ ապահովելով ծրագրի 80.7%-ով կատարում: Նշված հատկացումներից 40.7 մլն դրամ տրամադրվել է վատառողջությանը, ավելի քան 224.2 մլն դրամ՝ անաշխատունակությանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 97.1%-ով և 78.3%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծրագրի ցածր կատարողականով:

*Ծերություն* բնագավառի ծրագրերին 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 43.5 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 97.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծերության բնագավառի ծախսերը աճել են 13.9%-ով պայմանավորված սոցիալական կենսաթոշակների աճով :

*Հարազատին կորցրած անձանց* հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 6.8 մլն դրամ կամ նախատեսվածի 15.2%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը աճել են մոտ վեց անգամ:

*Ընտանիքի անդամների և զավակների բաժնի* գծով պետական բյուջեի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 8.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 83.8%-ը, որից գումարից շուրջ 8 մլրդ դրամը ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության գումարն է, որը 87.2%-ով ֆինանսավորվել է: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընտանիքի անդամներ և զավակներ բաժնի ծախսերը աճել են 8.2%-ով:

Սոցիալական ոլորտի ծախսերից 579.7 մլն դրամ տրամադրվել է *գործազրկությանը*, որը կազմել է եռամսյակային ծրագրի 70.6%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է գործազրկության նպաստի և գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց մասնագիտական ուսուցման ծրագրերի գծով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գործազրկության ծախսերը աճել են 36.9%-ով:

*Բնակարանային ապահովման* ծրագրերին 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 457.3 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 88.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 76.2%-ով:

*Սոցիալական հատուկ արտոնություններին (այլ դասերին չպատկանող)* հատկացվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 96.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման, (369 մլն դրամ կամ 94.2%) և վետերանների պատվովճարների (267.3 մլն դրամ կամ 93.1%) ծրագրերի ցածր կատարողականով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված

ծախսերը աճել են 28.8%-ով պայմանավորված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծավալի և վետերանների պատվովճարների ավելացմամբ:

*Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության* խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 993.7 մլն դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 55.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստների (1.1 մլն դրամ) և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի (18.7 մլն դրամ ) ցածր կատարողականով:

2009 թվականի առաջին եռամսյակում *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից* նախատեսված 2.6 մլրդ դրամից օգտագործվել է 358.5 մլն դրամ կամ նախատեսվածի 13.6%-ը: 2008 թվականի նույն ժամանակահատվածում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 813.3 մլն դրամ:



### **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐՂԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ**

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 23.2 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված 45.5 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետական բյուջեն կատարվել էր 13.8 մլրդ դրամ հավելուրդով: Ընդ որում, ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են ավելի քան 21.6 մլրդ դրամ՝ նախատեսված 41.5 մլրդ դրամի դիմաց: Շեղումը պայմանավորված է նրանով, որ անցած ժամանակահատվածում նախատեսվել էր շուրջ 58.3 մլրդ դրամ օգտագործել բյուջեի 2009 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից և ժամանակավորապես ազատ միջոցներից, սակայն փաստացի արդյունքներով օգտագործվել է 37.0 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը կազմել են -6.9 մլրդ դրամ (13.33 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված հասույթի և 19.5 մլրդ դրամի մարման փաստացի ցուցանիշների պարագայում)՝ նախատեսված շուրջ -6.8 մլրդ դրամի դիմաց: Դեֆիցիտի թերի ֆինանսավորման պատճառը հաշվետու տարվա առաջին եռամսյակում նախատեսվածից պակաս ծավալով տեղաբաշխումներն են. տեղաբաշխվել են 13,337.7 մլն դրամի պարտատոմսեր, որից հասույթը կազմել է 12,480.2 մլն դրամ: Թերտեղաբաշխումները պայմանավորված են բանկային համակարգում առկա դրամային իրացվելիության պակասով, ինչպես նաև ԱՄՆ դոլար/դրամի փոխարժեքի վարքագծով պայմանավորված համակարգում առկա սպասումներով, երբ ներդրումներ կատարվում էին մեծամասամբ արժութային ակտիվներում: 2009 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ 300,000.0 հազար դրամ ծավալով: Այս պարտատոմսերից տեղաբաշխվել են 49,775.0 հազար դրամի պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 49,981.1 հազար դրամ:

2009 թվականի առաջին եռամսյակում շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը, որը կազմել է 459.2 հազար դրամ: Սուրհակների մարման նպատակով նախատեսված շուրջ 14.8 մլն դրամի դիմաց կատարվել են 422.5 հազար դրամի վճարումներ:

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 8.5 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 85.5%-ը: Մասնավորապես՝ շուրջ 5.5 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին աղբյուրներից ստացված նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի

շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 86.4%-ը: 3.0 մլրդ դրամի վարկ է տրամադրվել «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին: Նախկինում տրամադրված վարկերից բյուջե է վերադարձվել 77.5 մլն դրամ, որի գծով առաջին եռամսյակում մուտքեր չէին ծրագրվել:

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է 1.5 մլրդ դրամով՝ կազմելով նախատեսված շուրջ 4.0 մլրդ դրամի 38.7%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է վարկային միջոցների օգտագործման ցածր ցուցանիշով:

Փոխառու միջոցներից ֆինանսավորումը կատարվել է 82.0%-ով՝ կազմելով ավելի քան 8.8 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվել են ավելի քան 11.4 մլրդ դրամ վարկային միջոցներ կամ եռամսյակային ծրագրի 85.0%-ը՝ պայմանավորված նշված միջոցներով իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

2009 թվականի առաջին եռամսյակում շուրջ 2.6 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 1.8 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 349.5 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, շուրջ 12.9 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 427.5 մլն դրամ՝ Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը:

Ֆինանսական ակտիվների գծով ֆինանսավորումը կատարվել է 99.6%-ով և կազմել շուրջ -7.3 մլրդ դրամ: 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից արտաքին վարկավորումը կազմել է շուրջ 7.3 մլրդ դրամ, որը որպես միջպետական վարկ տրամադրվել է ԼՂՀ-ին: 29.5 մլն դրամ վերադարձվել է Վրաստանի կողմից՝ ՀՀ նկատմամբ ունեցած պարտքի դիմաց: Նշված գումարը 2008 թվականի պարտավորություն է, որը Վրաստանի կողմից վճարվել է սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ 2008 թվականի դեկտեմբերին, սակայն միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվարին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 42 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.5%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 31.9 մլն դրամով ավելացել է արտաքին վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը: